


հաջողվեց գտնել շուղալեցի երեք անձնավորությունների՝ Ստեփանոսին, Պետրոսին և Թեոդորոսին, որոնք խոստացան օգնել նրան իր ձեռնարկության մեջ: Այս երեք հայերը պայման կնքեցին Ոսկանի հետ, որով Ստեփանոսը և Պետրոսը խոստացան, երբ աստվածաշունչը տպագրած պատրաստ լինի, տանել այն էջմիածին վաճառելու համար: Ինչ վերաբերում է Թեոդորոսին, սա համաձայնվեց իր շահույթի կեսը զիջել նրուսաղեմի հայկական վանքին, իսկ մյուս կեսը՝ Հուլի վանքին: Ոսկանը խանդավառված այս երեք հայերի խոստումներից, մեկնեց Ամստերդամ, որտեղ նա արագորեն սկսեց տպագրությունը: Այդ բանի համար նա գործ ածեց այն տառերը, որն օգտագործում էր իր եղբայր Ավետիսը, որովհետև Ծարեցիի տառերը չափազանց խոշոր էին և սակավ գործածական: 1666 թվականին Ոսկանը Ամստերդամում ավարտեց իր առաջին հայկական Աստվածաշնչի⁶ տպագրությունը՝ փայտափորագիր նկարազարդերով: Սրանով ի կատար ածվեց իր, գուցե և Ամստերդամի քրիստոնյա հայ համայնքի մեծ ցանկությունը:



Նկ. 3. Մի էջ Հուկաս վանանդեցու հայերեն բառարանից՝ զբված իր ձեռքով:

Որքան ինձ հայտնի է, ներկայումս 1666-ի այս հայերեն Աստվածաշնչից գոյություն ունի ևս երեք օրինակ: Այս երեք օրինակից մեկը գտնվում է Լեյդենի համալսարանական գրադարանում, իսկ երկրորդը՝ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում: Ազգային գրադարանի այս հայերեն Աստվածաշնչի մասին պրոֆ. Բեյվանկը (Byvanck) 1933-ի «Հնագիտական տարեգրքում» գետեղված իր հոդվածում պատմում է մի քանի հետաքրքիր մանրամասնություններ: Նախ պրոֆ. Բեյվանկը հավատացնում է, թե այն տառերը, որ Քրիստոֆել վան Դելլը կտրել է հայազգի Մատթեոս Ավագի համար, տակավին գոյություն ունեն և պահվում են ներկայումս Վենետիկի ծովալճակում (լագունայում): Իր այս տեղեկությունը պրոֆ. Բեյվանկը քաղել է Ch. Enschedé-ի «Fonderies des caractères et leur matériel dans les Pays-Bas du XV au XIX siècle» աշխատությունից (էջ 69) և նույնպես մասնաշնչում է M. M. Kleer-Koper-ի և W. P. van Stockum-ի «De boekhandel te Amsterdam» աշխատությունը (հատոր

1, էջ 24): Այնուհետև պրոֆ. Բեյվանկն ասում է, որ գոյություն ունի առաքելական փոխառող Johannes van Neercassel-ի հանձնարարական (1668 թ. հոկտեմբերի 22)...

Փարիզի Ազգային գրադարանում գտնվող Աստվածաշնչի օրինակը, բացի հիանալի կազմ ունենալուց, նշանավոր է նաև արքա Լուդովիկոս XIV պատվին տպագրված նամակով (1669 թ.), որը միասին կազմած է Աստվածաշնչի հետ: Գուցե այս աստվածաշունչն ուղարկել են Ֆրանսիայի թագավորին, հույս ունենալով, որ այդ նվերը կհատուցվի դրամական և քաղաքական օգուտով, ինչպես սովորաբար տեղի էր ունենում նման դեպքերում: Բայց պետք է հաստատել խոսք այս Աստվածաշնչի հիանալի կազմի մասին: Այս կազմը պատրաստել է ոչ այլ ոք, քան Ամստերդամի մեծ վառարանի այդ ճյուղում՝ Ալբերտ Մագնուսի Գրքերի կազմարար և առհասարակ կազմեր պատրաստող Ալբերտ Մագնուսի մասին երկար տարիներ բավական շատ բան էին գրում: Այդ հրապարակումներից Mr. H. F. Wijnman-ի «De Amsrerdamse boekbinder Albert Magnus» հոդվածը «Oud-Holland» պարբերականում (1937 թ., 44-րդ տարի) ամենալավերից մեկն է նաև նրանով, որ գրական մանրամասն ցուցակ է տալիս և չափազանց հեշտացնում է հետագա ուսումնասիրությունը...

Փարիզի հայերեն Աստվածաշունչը, նախքան այն Լուդովիկոս արքային ներկայացնելը, Ալբերտ Մագնուսն ամփոփել է մի զեղեցիկ կազմի մեջ, մի կազմ, որով մենք հիմա ևս կարող ենք հիանալ: Ալբերտ Մագնուսը զարդարել է նաև Աստվածաշնչի կտրվածքները հիշարժան

6 Իրականում Ոսկանը Աստվածաշնչի տպագրությունն ավարտել է 1668-ին: